

4.- Պայմանագրային Տեսություն

Բարոյագիտության ոլորտին ներս *պայմանագրային տեսություն* (անգլ.՝ Contractarianism, գերմ.՝ Vertragstheorie) կը նշանակէ՝ մարդոց միջեւ գոյութիւն ունեցող պայմանագրութիւն մը, ուր կը յիշուին՝ բարոյական դրութեան մը կանոնները եւ մարդիկ իրենց հետաքրքրութենէն մղուած «պէտք է» հետեւին այդ պայմանագրութեան կանոններուն:

Պայմանագրային տեսութեան գլխաւոր ներկայացուցիչներէն կը նկատուի՝ աստրալիացի բարոյագէտ-փիլիսոփայ **Մաքի** (John Leslie Mackie, 1917 – 1981 թ.), որ որոշ չափով հետեւորդը եղաւ Հյուսիս բարոյագիտութեան ու զարգացուց զայն՝ վերլուծական փիլիսոփայութեան (Analytic Philosophy) արդիական միջոցներով:

Պայմանագրային տեսութեան կանոնները լաւապէս կը համապատասխանեն, **«նսկեայ կանոն»** կոչուած ականդական ու բազմաթիւ մշակոյթներու մէջ ծանօթ հետեւեալ դրական ու բացասական բանաձեւերուն.-

- *«Այլոց հանդէպ վարուէ՝ այնպէս, ինչպէս որ կ'ուզես, որ անոնք քեզ հետ վարուին».*
- *«Ինչ որ չես ուզեր որ քեզի ընեն, դուն ալ (այդ) ուրիշներուն մի՛ ըներ»:*

Պայմանագրային այս կանոնները կարելի է պարտաւորութիւններու երկու խումբերու մէջ ամփոփել:

- Ա.- *Դրական պարտաւորութիւններ, ինչպէս՝ ուրիշին օգնել, եւ՝ համագործակցութեան յատուկ կանոններ, ինչպէս՝ խոստումը յարգել.*
- Բ.- *Ժխտական պարտաւորութիւններ, ինչպէս՝ ուրիշին չվնասել, եւ՝ համագործակցութեան յատուկ կանոններ, ինչպէս՝ սուտ չխօսիլ:*

Տրամաբանական է, որ մարդիկ, իրենց անձնական հետաքրքրութենէն մղուած, պիտի հետեւին վերոյիշեալ կանոններուն, որովհետեւ անոնք պիտի ուզեն, որ իրենց հանդէպ ալ նոյն կանոնները կիրարկուին: Այլ խօսքով, ես պիտի օգնեմ ուրիշներուն եւ վնաս չհասցնեմ անոնց, որպէսզի փոխադարձաբար անոնք ալ ինծի օգնեն եւ ինծի վնաս չպատճառեն:

Որքան ալ տրամաբանական թուի բարոյական պայմանագրային տեսութիւնը, այսուհանդերձ, ինչպէ՞ս կարելի է ապահովել անոր կիրարկումը եւ ապահանել զայն:

Անգլիացի քաղաքագէտ-փիլիսոփայ **Հոբս** (Thomas Hobbes, 1588 – 1679 թ.), այս հարցումին պատասխանը կը գտնէ միայն պետութեան մօտ. այսինքն՝ միայն պետութիւնը կրնայ եւ պէտք է ապահովէ ու պահպանէ մարդոց միջեւ բարոյական պայմանագրային փոխարարութիւնը: Պետութիւնը, սակայն, չի գործեր բարոյական կանոններով, այլ քրեական իրաւունքով կամ օրէնքներով եւ պետական իրաւական օրէնքները չեն հիմնաւորուիր բարոյական արժէքներու միջոցով: